

## **Հայ - ուկրաինական միջկառավարական հանձնաժողով**

Տնտեսական համագործակցության հարցերով հայ-ուկրաինական միջկառավարական համատեղ հանձնաժողովը հիմնվել է համաձայն 1994 թ. հոկտեմբերի 7-ին կնքված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ուկրաինայի կառավարության միջև ազատ առևտրի մասին» Համաձայնագրի:

Համատեղ հանձնաժողովի անդրանիկ նիստը կայացել է 1999 թ. հուլիսի 20-ին՝ Կիևում: Վերջին, 5-րդ նիստը տեղի է ունեցել 2011թ. հունիսի 30-ին՝ Կիևում: Նիստի ընթացքում քննարկվել են մի շարք հարցեր և ձեռք են բերվել պայմանավորվածություններ համագործակցության ուղղությունների վերաբերյալ:

Մասնավորապես քննարկվել են. հայ-ուկրաինական առևտրատնտեսական համագործակցության ներկա վիճակը, համագործակցության հնարավորությունները տրանսպորտի, գյուղատնտեսության, արդյունաբերության և այլ բնագավառներում:

Տնտեսական համագործակցության հարցերով հայ-ուկրաինական միջկառավարական հանձնաժողովի համատեղ նիստի արդյունքում ստորագրվել է Հայ-ուկրաինական միջկառավարական հանձնաժողովի հինգերորդ համատեղ նիստի Արձանագրությունը:

***Հայ-ուկրաինական միջկառավարական հանձնաժողովի համանախագահներն են.***

**ՀՀ էկոնոմիկայի նախարար Տիգրան Դավթյանը՝** հայկական կողմից,

**Ուկրաինայի Պետգույքի կառավարման Գործակալության նախագահ Դմիտրի Կոլեսնիկովը՝** ուկրաինական կողմից: